

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

(Ըստ Ֆարարի, ՍառնՖերի, Մաւնի և այլոց)

Առ. Պալ. 1)

Մեծ թեթեամտութիւն պիտի լինէր կարծելը, թէ աւետարանիչների հռչակած անցքերը չունին ներքին կապակցութիւն և կազմում են մի շարք պատահական երեւոյթներ, որ կախումն ունին Մեծ Ուսուցչի կեանքի ընթացքում պատահած արտաքին հանգամանքներից։ Աստուծոյ Որդու դեսպանութեան (առաքելութեան) գործը ուրիշ կերպ չէր կարող կատարուել, բայց թէ ամենիմաստ Նախախնամութեան նախապահմանած կարգաւորութեամբ և ընթանալ տատուածային շաւղով դէպի Խաչ ու մարտիրոսական մահ, որի նպատակն էր մարդկային ազգի փրկութիւնը։

Մեծամեծ անցքերի պարբերաբար դասաւորելու հոգւոր հեռու պիտի լինէր Յիսուսի առաջին ընտրեալների հոգածութիւնից՝ իբրեւ կարեւորութիւնից զուրկ մի հանգամանք։ Մարդկային մտքի համար մինչ այդ անմատչելի ճշմարտութիւնը նրանց թւում էր իբրեւ ամենամեծ սահման խաւարի և յաւիտենական Լուսոյ թագաւորութեան, որ նոր էր ծագել մարդկութեան վրայ։ Ժամանակի այնպիսի ցուցմունքն, ինչպէս են, «յաւուրս չերովդի» կամ դէպ եղել նմա ի շարաւթու», կամ «մերձեցաւ տօն քաղարշակերաց», և թէ «վեց աւուրք յառաջ քան զԶատիկն» և այլն, բաւական էին համարւում նրանց գրութեան նպատակին համար։ Եթէ աշակերտներն ու առաքեալները, որ Յիսուսի հետ անմիջական յարաբերութեան մէջ էին, սակաւ առ սակաւ միայն կարողանում էին ըմբռնել Նորա վարդապետութիւնը և միայն Նորա երկրաւոր կեանքի

1) „Нива“, № 1893 9.

վերջին ժամանակներն սկսում են ճանաչել ու իւրացնել նորա քարոզների ամբողջ էութիւնը, ապա ուրեմն ժամանակակից միւս հեթանոս մատենագիրները, — որ գրանւում էին Աստուածորդու քայլերով սրբագործուած երկրից դուրս (բացի թերեւ Յովսէփ Փլաբիոսից, որ ծագումով Հրէայ էր), և որոնց, գուցէ կողմնակի ճանապարհներով, հասնում էին միջին տեղեկութիւններ միայն՝ Փոքր-Ասիայի մի աննշան դաւաւում երեւցող արտասովոր Մարդու և նրա կատարած գործերի մասին, — հաղիւ թէ կարողանային բնագլորէն միայն դատողութիւն անել Հրէաստանում կատարուած անցքերի մասին, այս կամ այն կերպ արտայայտել իրենց հայեացքը և անհրաժեշտ համարել իրենց հասած այս կամ անցքն արձանագրել տարուայ ու ամսաթուերով։

Ուստի, համարեա երկու հազար տարուց յետոյ, մեր օրերում միայն գրանց տարեգրութիւնն ու դասաւորումը ներկայանում են իբրեւ ուսումնասիրութեան առարկայ, մի գործողութիւն, որի վերջնական լուծումն աւելի կամ պակաս հեռւոր ապագայի խնդիր է։ Հետազօտող գիտնականներն արդէն եկել են այն եզրակացութեան, որ այդ հարցի լուծումը հնարաւոր է, և որի համար անում են ամեն տեսակ ջանքեր։

Հրէից ժողովրդի կենցաղավարութիւնը կրկնակի էր. կրօնական և քաղաքացիական, որոնց կրօնական տարին որոշում էր քաղաքիական տարուց։ Առաջինն սկսում էր գարնան հետ, երկրորդը՝ վեց ամսից յետոյ, այլապէս ասած՝ Ղևտական առաջին ամիսը համապատասխան էր քաղաքացիական տարուայ եօթներորդ ամսին և անուանւում էր նիսան (եկից ԺԲ. 1, 2). «Եւ ասաց Աստուած Մովսիսի եւ Ահարոնի յերկրին Նզիպտացոց, եւ ասէ, ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց, առաջին եղիցի այն...»։ Նիսանը համապատասխանում էր մարտի երկրորդ և ապրիլի առաջին կէսերին (մօտաւորապէս)։ Ահա և հետեւեալ համապատասխան ամիսներն իրենց անուններով. եկեղեցական 2-րդ և քաղաքացիական 8-րդ ամիսն էր

խար (ապրիլ—մայիս), 3—9 սիւն (մայիս—յունիս), 4—10 տամուզ (յունիս—յուլիս), 5—11 ապ (յուլիս—օգոստոս), 6—12 էլուլ (օգոստոս—սեպտեմբ.) 6—1 տիշրի (սեպտեմբ.—հոկտեմբ.), 8—2 մառխէշվան (հոկտեմբ.—նոյեմբ.), 9—3 քիսլ և (նոյեմբ.—դեկտեմբ.), 10—4 տէրէտ (դեկտեմբ.—յունուար), 11—5 շէքաթ (յունուար—փետրուար), և 12—6 ադար (փետրուար—մարտ)։ Դրանք բոլորն էլ լուսնային ամիսներ էին, որ և տևում էին 29 օր ու կէս (29 օր, 12 ժամ, 44 րոպէ ու 3 վայրկեան), հետևաբար մեր ամիսներից կարճ։ Ով որ առաջինը նկատում էր լուսնի կիսաբոլորակը մայր մտնող արևի վերջին ճառագայթներում, նա իսկոյն յայտնում էր Սինէդրիօնին¹⁾, վերջինս էլ, ընդունուած ծիսի համաձայն, այդ վայրկեանից ազգարարում էր նոր ամսի առաջին օրը։ Ամսպամած կամ մառախլապատ օրերին լուսնի ծնունդը կարող էր աննկատելի կերպով անցնել, այն ժամանակ վերջացող ամիսը շարունակուում էր երեսուներորդ օրն ևս, օրի երեկոյեանն արդէն առանց այլևայլութեան սկսւում էր նոր ամսի առաջին օրը, որովհետև նորածին լուսնի երևալուն սպասելն սյրևս միտք չունէր։ Առաջին գէպքում ամիսը համարւում էր պակաս (անդոյդ կամ նահանջ), իսկ երկրորդում՝ ամբողջ՝ զուգաթիւ։ Հետևաբար ամիսներն ու օրերը սկսւում էին երեկոյեան, և օրուայ 24 ժամերը հաշվւում էին արևի մայր մտնելուց յետոյ և ոչ թէ գիշերուայ ժամի 12-ից, ինչպէս այժմ մեզանում։ Նշանակւում է տարին ունէր 29 կամ 30 օր ունեցող 12 ամիսներ, մեր ժամանակի նման 31 օր ունեցող ամիսներ չկային։ Տարուայ վերջին հաշիւը պակաս էր դուրս գալիս, որը լրացնում էր Սինէդրիօնը արուեստական ճանապարհով, նայած տաքութեան աստիճանին ու հունձի ժամանակին։ Նկատելի է, որ ըստ մովսիսական

1) Սինէդրիօն—ծերերի ու գիտնականների համաժողով, բարձրագոյն ատեան, որ վճռում էր Հրէաստանի կրօնական, դատական ու ազգային ամենակարեւոր խնդիրները։ Մ. Թ.

օրինաց, տօները զուգահաւասարեցնում էին, այսպէս
ասած, երկրագործական որոշ ժամանակներին, այսպէս,
Պասեքը (Ջատիկը) պիտի հանդիպէր հունձի սկզբներին,
Պէնտէկոստէն—նրա վերջերին, Տաղաւարահարաց տօներն
սկսում էին պտուղների ու գիւղատնտեսական ամեն տե-
սակ բերքերի հաւաքելուց յետոյ: Ըստ Տալմուդի, տիշրիի
(սեպտ.—հոկտ.) երկրորդ կիսից յետոյ երկու ամսուայ
ընթացքում զբաղւում էին ցանքսերով, հետեւեալ երկու
ամիսները (այս. կիսիւի երկրորդ կէսից սկսեալ ամբողջ
տէրէտն ու շէքաթի առաջին կէսը) համարւում էին ձմե-
րային, մնացեալը նոյն կարգով. երկու հետեւեալ ամիս-
ները—ձմրանվերջ, այնուհետեւ երկու ամիս յատկացւում
էր հունձի, երկու ամիս—ամառնային զբաղմունքների,
այս վերջին երկու ամիսները—հանգստեան: Գարին հաս-
նում էր միւս հացաբոյսերից առաջ, այդ պատճառաւ
նիսանը,—եկեղեցական առաջին ամիսը, պիտի հանդիպէր
գարեհունձի սկզբին, իսկ եթէ եկեղեցական աղար ամսի
վերջին, ցուրտ եղանակների պատճառաւ, գարին չը հաս-
նէր ու ստիպուած լինէին սպասել հունձի մօտաւորապէս
մի ամիս ևս, այս դէպքում Սինէդրիօնն աւելացնում էր
տարուայ վրայ մի տասներեքերորդ ամիս ևս—վէաղար
(երկրորդ ագար). այն ժամանակ տարուայ մէջ օրերի
թիւը երբեմն հասնում էր 384-ի: Այժմ պարզ է. թէ
քանի դժուարութիւններ առաջ են գալիս ժամանակի
համեմատական հաշւագիւտն անելու համար:

(Շարունակելի).

